

# ԱԼԲԵՐ ԿԱՄՅՈՒԻ «ԺԱՆՏԱԽՏԸ» ՎԵՊԸ ԵՎ ՆՐԱ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԸՍՏ ՕԲՅԵԿՏԻՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Աննա Հակոբյան

*Երևանի պետական համալսարան*

Հայտնի է, որ թարգմանաբանությունը հաշտեցնում է լեզվաբանական և գրականագիտական մտքերը: Այն մեզ թույլ է տալիս քննել որևէ գեղարվեստական երկ երկու ասպեկտով՝ թե՛ լեզվաբանական, և թե՛ գրականագիտական: Ուստի մինչև լեզվաբանական ուսումնասիրության անցնելը, հարկ ենք համարում կանգ առնել ֆրանսիական գրականության XX դարի մեծագույն դեմքերից մեկի՝ բարոյախոս, փիլիսոփա, էսսեիստ, վիպասան, թատերգակ, ի վերջո, մեծ հումանիստ Ալբեր Կամյու երևույթի վրա, մանավանդ որ. այս օրերին աշխարհի բոլոր անկյուններում նշվում է Կամյուի ծննդյան 100-ամյակը:

Ալբեր Կամյուն այն գրողն է, որի մասին դժվար է նոր բան ասել, ամեն ինչ հայտնի է, ինչպես Շեքսպիրի կամ Նարեկացու դեպքում: Սակայն նրան շարունակում են թարգմանել, որովհետև Կամյուն այն գրողն է, որի կարիքը մշտապես զգում ենք՝ ինքներս մեզ հասկանալու համար: Նա նաև այն մեծ անհատականություններից է, որի հետ կարելի է գրուցել, վիճել, քանի որ մեծերին են հակաճառում. ճղճիմ մարդիկ ընդդիմախոս չունեն:

Կամյուն արդեն դասական գրող է, նրան մեր ընթերցող հասարակությունը վաղուց է «սեփականացրել», նրան թարգմանել են, թարգմանում են և դեռ պիտի թարգմանեն, քանզի նրան ընթերցում ենք, վերընթերցում և վերստին փնտրում ինքներս մեզ գտնելու համար: Մեծ քայլերով է առաջ գնում նաև կամյուագիտությունը: Վերջին տարիներին բազմաթիվ գրականագիտական հոդվածներ, ուսումնասիրություններ, համալսարանական աշխատանքներ գրվեցին հանրահայտ գրողի ստեղծագործությունների շուրջ: Այս ուղղությամբ առաջինի և անկրկնելիի դերը պատկանում է «Գարուն» ամսագրին, իսկ այնուհետև՝ «Ապոլոն» հրատարակչությանը: Դեռ 1967թ. «Գարուն» ամսագրում տպագրվեց Կամյուի «Անկում» վեպը՝ Գրիգոր Քեչիշյանի թարգմանությամբ, հետագայում «Սովետական գրող» ամսագիրը ռուսերենից Արմեն Հովհաննիսյանի թարգմանությամբ լույս ընծայեց «Օտարը» վեպը՝ «Օտարականը» վերնագրով: Նույն գործը՝ «Օտարը», 1995թ. հրատարակեց «Ապոլոնը»՝ Աննա Հակոբյանի թարգմանությամբ՝ արդեն ֆրանսերենից: Այնուհետև, նույն թվականին լույս տեսավ «Սիզիփոսի առասպելը» խոհագրությունը՝ Գրիգոր Զանիկյանի թարգմանությամբ: 2002թ. «ԱևՄ» հրատարակչությունը ձեռնարկեց Կամյուի գործերի լիակատար հրատարակման՝ հինգհատորյակի գործը: Առաջին («Շվեդական ճառեր», «Օտարը», «Ամուսնություններ», «Երջանիկ մահ», «Արդարադատները») և երկրորդ («Ժանտախտը») հատորների շեղալից հաջողությունից հետո, թարգմանվեց և շուտով լույս կտեսնի գրողի ստեղծագործությունների երրորդ հատորը՝ «Ընդվզող մարդը» խոհագրությունների ժողովածուն:

Սակայն ո՞վ էր այդ աղմկահարույց մարդը, որը թեպետ կարճ կյանք ունե-

ցավ (1913-1960), բայց Ռաստինյակի նման կարողացավ նվաճել ողջ աշխարհը (քանզի ալժիրցի էր և եկել էր նվաճելու Ֆրանսիան):

1960թ. հունվարի 4-ին Ֆրանսիան թաղված էր առատ ծյան մեջ: Կամյուն Փարիզ էր վերադառնում իր հրատարակիչ Միշել Գալիմարի մեքենայով: Ետևի նստարանին նա դրել էր իր «Առաջին մարդը» անավարտ վեպը, որը պետք է նշանավորեր իր ստեղծագործության երրորդ շրջանը՝ **Աբսուրդից և Ընդվզումից** հետո: Իննում, Փոքրիկ-Վիլբլըվենի մոտ ճանապարհի կեռմանի վրա մի մեծ ծառ ցցվեց շրջադարձի պահին: Ճակատագրական բախումից մեքենայի թիթեղները նույնքան հեշտությամբ ճնշվեցին, որքան թղթերը: Ասում են՝ «աչքերը չբացվեցին, տեսքը՝ հանգիստ ու ասես զարմացած»:

Ալբեր Կամյունի մահվամբ որոշ ժամանակ ասես հանգեց երջանկության և արդարության գաղափարը, որ պահում էր դեկը փոթորիկների ժամանակ: Նրա շվեդական ճառում, որն արտասանվել է 1957թ. դեկտեմբերի 10-ի Նոբելյան մրցանակների հանձնման հանդիսավոր արարողության ժամանակ, երիտասարդ մրցանակակիրը նշում է. «Այսօր յուրաքանչյուր արվեստագետ զինվորագրված է իր ժամանակի թիապարտության մեջ: Նա պետք է համակերպվի դրան, այսինքն՝ շարունակի ապրել և ստեղծագործել: [...] Գրողը կարող է ձեռք բերել հանրության հետ ընդհանրության զգացողությունը, որը նրան կարգարացնի, սակայն մեկ պայմանով՝ որ նա ընդունի իր գործի մեծությունը կազմող երկու պարտավորություն՝ **ժառայել ճշմարտությանը և ժառայել ազատությանը**»:

Սակայն այսօր մեր խնդիրն է նաև վերլուծել 1991թ. «Ապոլոնի» լույս ընծայած «Ժանտախտը» վեպը՝ Գրիգոր Քեշիշյանի թարգմանությամբ: Եվ այդ վերլուծությունը կհետապնդի թարգմանաբանական նպատակ:

«Ժանտախտը» վեպը, որը լույս է տեսել երկրորդ աշխարհամարտից հետո, ի հակադրություն «Օտարի», անհատի վեպ չէ, այն կոլեկտիվ ցավ է, համայնքի ողբերգություն: Բենահարթակին է օրանցիների սոցիալական կյանքը, կրոնական զգացմունքները, որոնք հանկարծակի հայտնվել են «պաշարման վիճակում»: Սակայն ստեղծագործության հիմքում հատկապես բարոյական խնդիրն է, Չարիքի դեմ պայքարելու անհրաժեշտությունը, քանի որ, ինչպես Ռամբերն է ասում, «այս պատմությունը վերաբերում է բոլորիս», մենք պարտավոր ենք բոլորս նույն եռանդով և միահամուռ պայքարել ժանտախտի դեմ ամենուրեք: Ինչո՞ւ է Կամյուն ընտրել ժանտախտը՝ որպես դժբախտություն: Որովհետև այն մարմնավորում է մարդու ամբողջ ցավը: Ժանտախտի դեմ բոլոր մարդիկ նույնն են: Այնքանով, որքանով որ գրված է ֆաշիզմի օկուպացիայի հիշողություններով, այն մի ամբողջ ժողովրդի պատասխանն է այդ համընդհանուր ցավին: 1947թ, լույս տեսած «Ժանտախտը» վեպը փաստորեն վճռորոշ դեր խաղաց Կամյունի կյանքում Նոբելյան մրցանակին հասնելու ճանապարհին:

Իսկ ինչպե՞ս է այն ներկայացված հայ ընթերցողին: Ահա սա է մեր խնդիրը:

Արժևորենք թարգմանությունը ըստ օբյեկտիվորեն սահմանված չափանիշների:

Մեր սահմանած չափանիշներից առաջինը՝ **համարժեքության** խնդիրը, որտեղ կարևորվում է բառի ընտրությունը՝ լինելով ոճի հիմնարար տարրը, ծախողված է: Բառացի թարգմանության անթիվ-անհամար օրինակներ անհնարին են դարձնում անզամ կենտրոնանալ դեպքերի ընթացքի վրա:

- *Docteur, disait-elle, qu'est-ce que c'est?* (Camus 1947:19)

- Բժիշկ,- հարցրեց նա,- **ի՞նչ է պատահում նրան:**  
(Քամյու1991:16)

փոխանակ՝

- Բժիշկ,- կրկնում էր նա,- **դա ի՞նչ է:**

... *et qu'un de ses lacets était dénoué-* որ **նրա կոճակներից մեկը չէր կոճկված:** (Քամյու1991:152)

փոխանակ՝ **...իսկ մի կոշիկի քուղը քանդված էր:**

*Il se laissait aller...* (Camus 1947:34)

**Նա ինքն իրեն բաց թողեց:** (Քամյու1991:27)

փոխանակ՝ **Նա իրեն բարձիթողի էր արել:**

Նորություն չէ, որ բազմիմաստության դեպքերում բառը թարգմանվում է ըստ համատեքստի :

Ֆրանսերենում *digérer* բայը բազմիմաստ է՝ *digérer* – մարսել, տանել, համբերել, դիմանալ և այլն: Թարգմանիչն անտեսում է այդ բազմիմաստությունը՝ այն դիտարկելով միայն առաջին՝ *մարսել* իմաստով:

... **չէին հասցնում այդ հոգնությունը մարսել:**

կամ

*Vif* ածականը ֆրանսերենում բազմիմաստ է, սակայն թարգմանիչը չի կարողացել գտնել հայերեն ճշգրիտ համարժեքը:

... *un vif intérêt - կենդանի հետաքրքրություն*  
փոխանակ՝ **բուռն հետաքրքրության:** (Քամյու1991:119)

*Air* բազմիմաստ գոյականը կարող է թարգմանվել և՛ տեսք, և՛ պահվածք, և՛ օդ, և՛ մեղեդի, սակայն այս դեպքում ունենք կոպիտ սխալ մեկնաբանություն տվյալ համատեքստում:

*Les oiseaux, qui avaient un air de fonctionnaires endimanchés...*  
(Camus 1947:224)

**Թռչնակները, որոնք հանգստի օրվա պաշտոնյաների հովն ունեին...** (Քամյու1991:175)

փոխանակ՝ **Թռչնակները, որոնք կիրակնօրյա պաշտոնյաների տեսքն ունեին...**

Երբեմն բառացի թարգմանությունը հասնում է անհեթեթության:

*Il y a le même effacement et c'est elle que j'ai toujours voulu rejoindre. Il y a huit ans, je ne peux pas dire qu'elle soit morte. Elle s'est seulement effacée un peu plus que d'habitude.* (Camus 1947:224)

Նրան է, որին ես միշտ ուզեցել եմ **վերամիանալ**: Ութ տարի է անցել, բայց չեմ կարող ասել, որ մահացել է: **Նա մի քիչ ավելի է ջնջվել, քան սովորաբար**: (Քամյու1991:173)

*Le jour de la déclaration préfectorale, Cottard disparut complètement de la circulation.*

Պրեֆեկտուրայի հայտարարության օրը Քոթարը **ամբողջովին անհետացավ**: (Քամյու1991:174)

Ի՞նչ է նշանակում **ամբողջովին անհետանալ**:

*Mais, de l'ombre du couloir, deux hommes avaient surgi.*

(Camus 1947:224)

Բայց միջանցքի ստվերից երկու մարդիկ հանկարծ **դուրս թրան**:

(Քամյու1991:174)

*... demandaient en effet à Cottard..., et celui-ci, poussant une sorte d'exclamation sourde, tournait sur lui-meme et fonçait déjà dans la nuit sans que les autres, ni Tarrou, eussent le temps d'esquisser un geste.*

(Camus 1947:224)

... հարցնում էին Քոթարին..., **իսկ նա, մի տեսակ խուլ բացականչություն արձակելով, ինքն իր վրա պտույտ գործեց և անհետացավ մթության մեջ, առանց որ ոչ մյուսները, ոչ էլ Տարրուն ժամանակ ունենան շարժում անել փորձելու**: (Քամյու1991:174)

Հայտնի է, որ «բառերի բազմիմաստությունը լեզվի բառապաշարի պատմական զարգացման անխուսափելի հետևանքն է, նրա կատարելագործման ու մշակման ցուցանիշը, իբրև լեզվի վիթխարի հարստության [...] չափանիշը» (Աղայան1984:48): Այս վեպում թարգմանիչը չի կարողացել հայերենով լիարժեք փոխանցել հեղինակի միտքը:

Ֆրանսերենում *toujours* մակբայը բազմիմաստ բառ է, սակայն դարձյալ անտեսված.

Ռիեն շարունակում էր **միշտ քայլել**: **Միշտ շարունակելով քայլել...**

(Քամյու1991:175)

*toujours* մակբայը թարգմանված է միայն առաջին իմաստով՝ փոխանակ՝ **առաջվա պես կամ անընդհատ քայլելով**:

*Tarrou lui fit remarquer, que...*

(Camus 1947:224)

Տարրուն **նկատել տվեց**, որ...

(Քամյու1991:175)

Բավական տարածված սխալ: Ֆրանսերենում հաշվվում է *faire* բայի 83 կիրառություն. այս բազմիմաստ բայն ունի չափազանց լայն իմաստ՝ և՛ ակտիվ, և՛ չեզոք իմաստներով, և՛ որոշակի, և՛ անորոշ իմաստներով, և՛ կոնկրետ, և՛ վերացական իմաստներով (Robert 2006:1026) Այն հանդես է գալիս նաև որպես կիսաօժանդակ բայ, երբ նրան հաջորդում է անորոշ դերբայ, օր.՝ *faire couler, faire entrer, faire sortir* և այլն:

Ընդհանրապես առածը կամ ասացվածքը որպես կանոն թարգմանվում է գուգահեռ համարժեքով, այսինքն՝ նույն ձևը և իմաստն ունեցող առածի կամ ասացվածքի միջոցով (Հակոբյան 2006:23):

*/Ինչպես ասում են իմ հայրենիքում՝ «ոչ մի գործ վաղվան պետք չէ թողնել...»* (Քամյու 1991:175)

*/Comme on dit dans mon pays:/ Il ne faut jamais remettre au lendemain...* (Camus 1947:224)

Հայերենում ունենք համարժեք ասացվածքը. **Այսօրվա գործը վաղվան չեն թողնի:**

Բացթողումները կամ կրճատումները սովորաբար որակավորվում են որպես հրաժարական՝ դժվարությունները թարգմանելիս: Թարգմանչի կարծիքով հակիմաստն ավելի մեծ սխալ չէ, քան բացթողումը: Նման կրճատումները կամ բացթողումները բավականին շատ են այս վեպի թարգմանությունում:

Օրինակ՝

*La contagiosité risquait maintenant d'être plus grande, avec cette nouvelle forme de l'épidémie.*

*Հիվանդությունը այժմ ավելի վարակիչ էր:* (Քամյու 1991:148)

Եվ վերջ: Այնինչ մի քանի բառ բաց է թողնված, ողջ նախադասությունը կիսատ է հնչում՝

*Վտանգ կար, որ վարակելիությունն այժմ ավելի էր մեծանում համաճարակի այս նոր ձևի հայտնվելու պատճառով:*

Կան բավական մեծ թվով պատճենումներ՝ ռուսերենից. Օրինակ՝

*Comment faire imaginer, par exemple, une ville sans pigeons, sans arbres et sans jardins, ou l'on ne rencontre ni battements d'ailes ni froissements de feuilles, un lieu neutre pour tout dire?* (Camus 1947:10)

*Ինչպես պատկերացնել մի քաղաք՝ առանց աղավնիների, առանց ծառերի, առանց այգիների, որտեղ չես լսում ոչ թևաբախյուն, ոչ տերևների շրշյուն: Կարճ ասած, բոլորովին բացասական մի վայր:* (Քամյու 1991:5)

Չմոռանանք նշել, որ գլխավոր հերոսի անունը հայերենում ոչ թե **Ռիտ** է, այլ՝ **Ռիո**: Ընդօրինակված է ռուսերենից, որը կհաստատի մեր գնահատականը. սա ոչ թե թարգմանություն է, այլ հարմարեցում:

Մենք կիրառեցինք գնահատման միայն մեկ չափանիշ՝ համարժեքության հարցը: Սակայն դա էլ բավարար է, որպեսզի թարգմանությունը գնահատվի անբավարար:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան, Է. (1984) *Ընդհանուր և հայկական բառագիտություն*. Երևան: Հայաստան:
2. Կանյու, Ա. (2012) *Ժանտախտը*. / Ֆր. թարգմ. Ա. Հակոբյանը. Երևան: ԱևՄ:
3. Հակոբյան, Ա. (2006) *Թարգմանության տեսության հիմունքներ*. Երևան: ԱևՄ:
4. Քանյու, Ա. (1991) *Ժանտախտը*. / Ֆր. թարգմ. Գ. Քեշիշյանը. Երևան: Ապրիլ:
5. Camus, A. (1947) *La Peste*. Paris: Gallimard.
6. Le Petit Robert (2006) *Dictionnaire de la langue française*. Paris: Editions Robert.

### **Роман Альбера Камю “Чума” и оценка его перевода на армянский язык по объективным критериям.**

В статье рассматривается роман Камю “Чума” и перевод Г. Кешишяна на армянский язык. Пользуясь двойным свойством переводоведения, сначала представлен автор и значение романа “Чума” в мировой литературе, затем оценивается армянский перевод по уже многократно испытанным объективным критериям.

### **Albert Camus’ novel “The Plague” and the Evaluation of its Translation into Armenian by the Objective Criteria**

The article analyses Albert Camus’s novel “The Plague” and its translation into Armenian by G. Keshishyan. Due to the double aspect of the translation theory, the article, at first, discusses the role of the author and his novel in modern literature, then it evaluates the Armenian translation according to the multi- tested objective criteria.